ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՌԵԿՏՈՐԻ

ՀՐԱՄԱՆ

N° 054/2018-Ա
«07» հունիսի 2018թ.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՀ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ (ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ) ԲԱՇԽՈՒՄԸ ԸՍՏ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արդարադատության ակադեմիայի և Արցախի Հանրապետության Բարձրագույն դատական խորհրդի միջև համագործակցության մասին 2018թ փետրվարի 08-ին փոխըմբռնման հուշագրով, «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 23-րդ հոդվածով, 24-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի կողմից 26.01.2018թ. թիվ ԿԽ-001/18/3 որոշմամբ հաստատված «Դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման» 2018թ. ուսուցման ծրագիրը, Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի կողմից 06.06.2014թ. ընդունված թիվ 14-Լ որոշումը, Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 06.04.2018թ. թիվ 29Լ որոշումը՝

Հրամայում եմ

1. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2018թ. ուսումնական տարվա ԱՀ դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց (քաղաքացիական մասնագիտացում) բաշխումը ըստ փորձաշրջանի ղեկավարների՝ համաձայն Հավելված 1-ի:
2. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2018թ. ուսումնական տարվա ԱՀ դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց (քաղաքացիական մասնագիտացում)՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում փորձաշրջանի անհատական ծրագիրը՝ համաձայն Հավելված 2-ի:

Ռեկտոր **Ս.Առաքելյան**